ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Մանկավարժական խորհրդի նիստի

2025թ-ի դեկտեմբերի 26-ին կայացել է մանկավարժական խորհրդի նիստ:
Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2025թ-ի դեկտեմբերի 26-ի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
2. Մանկավարժական նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվություն (զեկուցող՝ Լ. Մանվելյան)
4. Սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում, սովորողների շարժի ներկայացում (տեղափոխում, ազատում և ընդգրկում) (զեկուցող՝ Լ. Մանվելյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի, նախագծային աշխատանքների քննարկում և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ Լ. Մանվելյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով 1-ին կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարողականի ամփոփում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):
7. Անդրադարձ 2025-2026 ուսումնական տարվա հունվար և փետրվար ամիսների իրականացվելիք աշխատանքներին (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
8. Այլ հարցեր

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի 2025թ-ի դեկտեմբերի 26-ի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):

Լսեցին՝

2. **Մանկավարժական նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանն անդրադառնալով նախորդ մանկավարժական խորհրդի նիստում կայացված որոշումների կատարման ընթացքին՝ տեղեկացրեց, որ արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու և աղետների ռիսկերը կառավարելու նպատակով նախորդ նիստով սահմանված ժամկետներում ձևավորվել է աշխատանքային խումբ, հաստատվել է դրա կազմը և իրականացվել է դերերի բաշխումը: Ներկայացրեց նաև, որ ուսումնական հաստատության մանկավարժական,

ծնողական և խորհուրդների, ինչպես նաև մեթոդական միավորումների նիստերի արձանագրությունների վարումն արդեն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

Լսեցին՝

3. **2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվություն (զեկուցող՝ Լ. Մանվելյան)**

Լ. Մանվելյանը ներկայացրեց ուսումնադաստիարակչական գործընթացի ընթացքի, թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման հետ կապված խնդիրները: Ներկայացրեց նաև կիսամյակի դասալսումների արդյունքներն ու նշեց, որ կային որոշակի թերություններ, որոնք առկա էին բոլորի ուսուցիչների մոտ, մասնավորապես օրվա դասի և հաջորդ դասի ներկայացման, դաստիարակների ներգրավվածության և ուսուցման տարբերակված մոտեցման կիրառման վերաբերյալ և հավելեց, որ մնացած բացերը կամ դուրս բերված փոքրիկ թերություններն անհատապես քննարկվել են մանկավարժներից յուրաքանչյուրի հետ:

Անց են կացվել իրավունքների իրազեկման օրեր՝ պատրաստվել են պաստառներ, հայտարարվել է սանիտարահիգիենիկ միջոցառումների ազդարարման շաբաթ, որի ամփոփմանը ևս իրականացվել է միջոցառում:

Իրականացվել են ԱՈՒՊ-ների քննարկումներ և երկամսյա աշխատանքների ամփոփում երկրորդ շրջափուլով:

Անց են կացվել նաև ամանորյա միջոցառումներ և իրականացվել է դասարանների ձևավորման մրցույթ:

Լսեցին՝

4. **Սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում, սովորողների շարժի ներկայացում (տեղափոխում, ազատում և ընդգրկում) (զեկուցող՝ Լ. Մանվելյան)**

Լ. Մանվելյանը ներկայացրեց սովորողների ուսումնական առաջադիմությունը, որն իր հաշվետվության մեջ ներկայացված էր աղյուսակով: 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների (տեղափոխում, ազատում և ընդգրկում) մասին հաղորդումը: Ներկայացրեց, որ 1-ին կիսամյակի ընթացքում ընդունվել է 4 աշակերտ՝

1) Սահակյան Դանիել -2-րդ Գ 10/09/2025թ
2) Սուքիասյան Մարկ - 3-րդ Գ 10/11/2025թ
3) Չաքիրյան Թաթուլ - 2-րդ Գ 19/11/2025թ
4) Գալստյան Վահագ - 2-րդ Գ 18/12/2025թ

Համակազմից 1-ին կիսամյակի ընթացքում դուրս գրվող չի եղել:

Կիսամյակի ընթացքում 5 աշակերտի համար կրթությունը կազմակերպվել է հեռավար եղանակով՝

1) Գևորգյան Մարիա՝ 7-րդ Ա
2) Գասպարյան Գեղամ՝ 3-րդ Բ
3) Առաքելյան Մարիամ՝ 1-ին Ա
4) Մնացականյան Ալեքս՝ 6-րդ Ա

5) Բաղդասարյան Գերասիմ՝ 3-րդ Ա

Կիսամյակի ընթացքում 11 աշակերտի, տարբեր խնդիրներով պայմանավորված՝ կրթությունը կազմակերպվել է հիբրիդային եղանակով՝

1) Հայրապետյան Ժասմին 9-րդ
2) Մաթիլյան Նարեկ՝ 9-րդ
3) Նալբանդյան Մարիա՝ 8-րդ
4) Տեր-Հարությունյան Մարիամ՝ 8-րդ
5) Կարապետյան Արման՝ 8-րդ
6) Բարսեղյան Գոռ՝ 6-րդ Բ
7) Սիմոնյան Նարեկ՝ 3-րդ Ա
8) Սնջարյան Հայկ՝ 4-րդ Գ
9) Զուրաբյան Ռոման՝ 4-րդ Գ
10) Խաչատրյան Աշոտ՝ 7-րդ Գ
11) Հարությունյան Բորիս՝ 8-րդ

Կիսամյակի ավարտին ունեցել ենք բացակայությունների 60 ժամը գերազանցած 2 սովորող՝ Խաչատրյան Աշոտ 7-րդ Գ դաս. 95 ժամ և Մկրդումյան Դավիթ 5-րդ Գ դաս. 89 ժամ:

Լսեցին՝

5. **2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի, նախագծային աշխատանքների քննարկում և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ Լ. Մանվելյան)**

Լ. Մանվելյանը ներկայացրեց, որ ուսումնական պլանի համաձայն, 2-րդ կիսամյակի 2-րդ շաբաթվա ավարտին, 5ա , 5բ, 5գ, 6ա , 6բ, 7ա , 7բ, 7գ դասարաններում ավարտվելու է 17 շաբաթ տևողությամբ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը, իսկ 8-րդ և 9-րդ դասարաններում մեկնարկելու է՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի սահմանած կարգի: Լ. Մանվելյանը նշեց նաև, որ դեկտեմբերի 22-ին «Կերպարվեստ» և «Տեխնոլոգիա» առարկաներ դասավանդող ուսուցչուհի Տ. Սարգսյանը գնացել է հղիության և ծննդաբերության արձակուրդ և այդ առիթով, որպես ժամանակավոր փոխարինող աշխատանքի է ընդունվել նոր մանկավարժ՝ Ա. Խաչատրյանը: Վերջինս կպարապի 2-րդից 9-րդ դասարանների «Կերպարվեստ» առարկան 18 ժամ և 3գ դասարանի «Տեխնոլոգիա» առարկան 4 ժամ, 1ա և 1բ դասարանների կերպարվեստ առարկայի 2 դասաժամը կպարապի դասվար՝ Տ. Մխեյանը, իսկ 3ա դասարանի «Տեխնոլոգիա» առարկան, ժամանակավոր՝ 2 շաբաթ տևողությամբ, կհատկացվի հատուկ մանկավարժ՝ Ա. Թաիրյանին, իսկ հետո կշարունակի՝ Հ. Մինասյանը:

Լ. Մանվելյանը նշեց նաև, որ դասացուցակի նախնական տարբերակում կան ժամային որոշ փոփոխություններ՝ պայմանավորված նոր դասաբաշխմամբ:

Լսեցին՝

6. **2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով 1-ին կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարողականի ամփոփում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Դպրոցի տնօրենի ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները, որի շրջանակում ներկայացվեց ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսումնառության առաջադիմության մշտադիտարկման, մանկավարժական և մասնագիտական աջակցության աշխատանքների, մեթոդական գործունեության, ինչպես նաև արտադասարանային և դաստիարակչական միջոցառումների իրականացման հիմնական ուղղությունները, կատարված աշխատանքներն ու ձեռք բերված արդյունքները:

Լսեցին՝

7. **Անդրադարձ 2025-2026 ուսումնական տարվա հունվար և փետրվար ամիսների իրականացվելիք աշխատանքներին (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Տնօրենի ժ/պ՝ Անի Գարեգինյանը ևս մեկ անգամ անդրադարձավ 1-ին կիսամյակում էլեկտրոնային մատյաններում կատարված բացթողումներին, հորդորեց շտկել դրանք, ժամանակին կատարել գրանցումները և ներբեռնել 2-րդ կիսամյակի առարկայական ծրագրերը:

Լսեցին՝

8. **Այլ հարցեր**

«Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա» առարկաներ առարկայական մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը զեկուցեց, որ «Այլընտրանքային հաղորդակցում» առարկան դպրոցում ներդրվել է 2025–2026 ուստարում, և այս պահին առկա են դժվարություններ՝ համապատասխան էլեկտրոնային մատյաններում բնութագրիչների բացակայության պատճառով: Նշվեց, որ առարկան դասավանդող ուսուցիչների մոտ առաջացել է հարց՝ ինչպես կազմակերպել և ամփոփել տվյալ առարկան, և հաշվի առնելով, որ առարկայի ծրագիրը նոր է ներկայացվել ԿԳՄՍ երաշխավորման, ինչպես նաև բնութագրիչների բացակայությունը, կիսամյակային ամփոփումը իրականացվել է միայն ԱՈՒՊ-ով:

Լսելով 2025 թվականի դեկտեմբերի 26-ի մանկավարժական խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանակավարժական խորհրդի 26.12.2025թ.-ի նիստի օրակարգը:
2. Նախորդ նիստի որոշումները համարել կատարված և գնահատել լավ:
3. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար նախատեսված աշխատանքներում առկա թերությունները (էլմատյանների վարում, թեմատիկ պլանների վերանայում, մատենավարություն) պլանավորվեցին վերացմնել մինչև 2-րդ կիսամյակի մեկնարկը:
4. 2-րդ կիսամյակի մեկնարկին ընդառաջ կազմակերպել դիմումների ներկայացման գործընթացը, համաձայն որի կիսամյակի ընթացքում պետք է տարբեր պատճառներուվ պայմանավորված պլանավորել սովորողների կրթության կազմակերպման գործընթացի ձևը: Իսկ բացակայությունների 60 ժամը գերազանցած սովորողների կիսամյակը համրել

ամփոփված՝ հաշվի առնելով այն, որ մեր դպրոցի սովորողները գնահատվում են ԱՈՒՊ-ով և մասնակցել են ամփոփիչ աշխատանքներին: Ինչպես նաև հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային մատյանում պահպանված են եղել կիսամյակային գնահատականները, հետագա հաճախումներով պայմանավորված՝ տարեվերջին վերջիններիս բացակայությունների դեպքում նրանց հարցը կդրվի լրացուցիչ քննարկման:

5. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասաբաշխումը, դասացուցակն ու նախագծերն՝ ըստ ժամանակացույցի իսկ պլանները մինչև հունվարի 2-րդ շաբաթվա վերջին օրը ներկայացնել տնօրենի հաստատմանը:
6. Դպրոցի տնօրենի կողմից ներկայացված՝ 2025–2026 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
7. Հաստատել և կազմակերպել 2025-2026 ուսումնական տարվա մեկնարկին և հունվար-փետրվար ամիսների իրականացվելիք աշխատանքները.
    - ստուգել առարկայական ծրագրերը և վերահսկել 2-րդ կիսամյակի առարկայական ծրագրերի ներբեռնումը էլ. մատյանում,
    - ներկայացնել 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացվելիք նախագծային աշխատանքների պլանները,
    - Պլանավորել ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված «Բանակի օրվան», «Մայրենի լեզվի», «Հ. Թումանյանին» նվիրված միջոցառումներ:
    - Վերահսկողությունը վերապահել ՄՄ ղեկավարներին և տնօրենի տեղակալներին:
8. «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի շրջանակներում բնութագրման միջոցով սովորողների գնահատում իրականացնելու դժվարությունների մասին ներկայացնել ԿԶՆԱԿ հիմնադրամին՝ խորհրդատվություն և աջակցություն ստանալու նպատակով:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**